ԵԴ/28533/02/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

18 ապրիլի 2022 թվական ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի Հմայակ Սիմոնյանի ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության, թիվ ԵԱԴԴ/0120/04/17 սնանկության գործով կառավարիչ Արամայիս Իսպիրյանի, ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Երևան քաղաքի նոտարական տարածքի նոտար Աննա Ղազարյանի՝ աճուրդն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին թիվ ԵԴ/28533/02/21 քաղաքացիական գործով ենթակայության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ ՀՀ սնանկության դատարանի 2022 թվականի ապրիլի 5-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գործի դատավարական նախապատմությունը և ենթակայության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

1. Հմայակ Սիմոնյանը (այսուհետ նաև՝ Հայցվոր) 2021 թվականի հունիսի 28-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի, թիվ ԵԱԴԴ/0120/04/17 սնանկության գործով կառավարիչ Արամայիս Իսպիրյանի, ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Երևան քաղաքի նոտարական

տարածքի նոտար Աննա Ղազարյանի, որով պահանջել է. *«անվավեր ճանաչել քաղաք Երևան, Մարգարյան փ., 23 շ., 32 բնակարան հասցեի անշարժ գույքի 2021 թվականի ապրիլի 30-ի աճուրդ վաճառքը, և որպես հետևանք անվավեր ճանաչել դրանից բխող 2021 թվականի մայիսի 14-ի անշարժ գույքի նոտարական թիվ 3360 գրանցամատյանում գրանցված առուվաճառքի պայմանագիրն ու դրա հիման վրա 2021 թվականի մայիսի 19-ին տրված թիվ 19052021-01-0327 սեփականության իրավունքի վկայականը»:*

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան)՝ 2021 թվականի օգոստոսի 18-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

3. Դատարանը (դատավոր՝ Տ.Գրիգորյան) 2022 թվականի մարտի 22-ին որոշում է կայացրել գործը ՀՀ սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) գործի քննության ընթացքում պարզվել է, որ քաղաք Երևան, Մարգարյան թիվ 23 շենքի թիվ 32 բնակարանի համասեփականատեր է եղել նաև սնանկ ճանաչված Գևորգ Սիմոնյանը:*

Միաժամանակ, սնանկության գործի շրջանակներում սնանկության կառավարչի կողմից հիշյալ անշարժ գույքը վաճառվել է աճուրդի միջոցով:

Ներկայումս քննվող հայցով հայցի առարկան վերաբերում է (…) սնանկության վարույթի շրջանակներում վաճառված և սնանկ ճանաչված անձի գույքի կազմում ներառված գույքի վերաբերյալ կայացված աճուրդն անվավեր ճանաչելուն և անվավերության հետևանքներ կիրառելուն, ինչից հետևում է նաև այն, որ սույն վեճը կարող է ազդել պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա»:

4. Թիվ ԵԴ/28533/02/21 քաղաքացիական գործը 2022 թվականի մարտի 31-ին մակագրվել է ՀՀ սնանկության դատարանի դատավոր Բ.Մկրտչյանին:

5. ՀՀ սնանկության դատարանը 2021 թվականի ապրիլի 5-ի որոշմամբ գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Սույն դեպքում պարզվեց, որ թիվ ԵԱԴԴ/0120/04/17 սնանկության գործն՝ ըստ Սուսաննա Պետրիկի Ադամյանի դիմումի՝ Գևորգ Հմայակի Սիմոնյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, 2019 թվականի փետրվարի 14-ից գտնվել է ՀՀ սնանկության դատարանի դատավոր Բ.Մկրտչյանիս վարույթում: Պարզվեց նաև, որ ՀՀ սնանկության դատարանի 2021*

թվականի դեկտեմբերի 29-ի վճռով թիվ ԵԱԴԴ/0120/04/17 սնանկության գործն ավարտվել է, վճիռը մտել է օրինական ուժի մեջ, այսինքն՝ թիվ ԵԱԴԴ/0120/04/17 սնանկության գործն այլևս չի գտնվում ՀՀ սնանկության դատարանի դատավոր Բ. Մկրտչյանիս վարույթում: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ բացակայում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնակարգումների հիման վրա թիվ ԵԱԴԴ/0120/04/17 սնանկության գործը քննելու հնարավորությունը»:

5. Թիվ ԵԱԴԴ/0120/04/17 սնանկության գործի վարույթն ավարտվել է 2021 թվականի դեկտեմբերի 29-ի վճռով, որը մտել է օրինական ուժի մեջ[1]:

6. Թիվ ԵԴ/28533/02/21 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի ապրիլի 11-ին:

Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

7. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *առկա են արդյո՞ք «Սնանկության մասին» ՀՀ օրենքով ամրագրված նախապայմանները՝ թիվ ԵԴ/28533/02/21 քաղաքացիական գործը Սնանկության դատարանի կողմից քննության առնելու համար:*

8. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում»:*

9. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (...): Սնանկության գործը վարվում է դատավորի կողմից միանձնյա»:*

[1] http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=15762598695854917

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և* ***պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը****, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է* ***սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում*** *որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր)»:*

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«Ընդհանուր իրավասության դատարանից քաղաքացիական գործ ստանալու դեպքում դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ենթակայությունը: Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան»:*

10. Սույն որոշման 8-9-րդ կետերում վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական գործերը, որպես կանոն, ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում: Այս ընդհանուր կանոնից բացառություն նախատեսված է «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Նշված օրենքի համապատասխան իրավակարգավորումների համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացնում է Սնանկության դատարանը: Սնանկության դատարանը միաժամանակ իրականացնում է նաև սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդեցություն ունեցող այն քաղաքացիաիրավական վեճերի քննությունը, որոնք համապատասխանում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված նախապայմաններին: Նշված իրավակարգավորմամբ օրենսդիրը նպատակ է հետապնդում առավել արդյունավետ դարձնելու դատական գործերի քննությունը և անձանց իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանությունը՝ կենտրոնացնելով սնանկության գործի հետ կապված և դրա առանձին փուլերի վրա

ազդեցություն ունեցող քաղաքացիական գործերը տվյալ սնանկության գործը քննող դատավորի վարույթում՝ որպես տվյալ սնանկության գործի շրջանակներում քննվող առանձին գործեր:

11. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ այն քաղաքացիական գործերը, որոնք հարուցվել են **սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ և ազդում են (կարող են ազդել) պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա,** բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, պետք է քննվեն **սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակում՝** որպես առանձին քաղաքացիական գործեր:

Այսպիսով, քաղաքացիական գործը վերոնշյալ հիմքով ենթակա է քննության սնանկության դատարանում՝ սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակում որպես առանձին քաղաքացիական գործ՝ հետևյալ նախապայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) քաղաքացիաիրավական վեճը պետք է ծագած լինի սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների կապակցությամբ,

բ) վեճի լուծումը պետք է ազդի պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա,

գ) սնանկության գործը պետք է գտնվի քննության փուլում, այսինքն՝ սնանկության գործի վարույթը պետք է ավարտված չլինի:

12. Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 18-ի որոշմամբ վարույթ է ընդունվել Հմայակ Սիմոնյանի հայցադիմումն ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի՝ Երևան քաղաքի Մարգարյան փողոցի թիվ 23 շենքի թիվ 32 բնակարանի 2021 թվականի ապրիլի 30-ի աճուրդն անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք դրանից բխող անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն ու դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

- Դատարանը 2022 թվականի մարտի 22-ին որոշում է կայացրել գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին: Դատարանը, վկայակոչելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը, արձանագրել է, որ քննվող քաղաքացիական գործով հայցի առարկան թիվ ԵԱԴԴ/0120/04/17 սնանկության գործով վարույթի շրջանակներում սնանկ ճանաչված անձի գույքի կազմում ներառված և վաճառված գույքի վերաբերյալ կայացված աճուրդն անվավեր ճանաչելուն և անվավերության հետևանքներ կիրառելուն ուղղված պահանջն է, ինչից հետևում է, որ տվյալ վեճի լուծումը կարող է ազդել թիվ ԵԱԴԴ/0120/04/17 սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

- Սնանկության դատարանը թիվ ԵԴ/15587/02/20 քաղաքացիական գործի ենթակայության վերաբերյալ իր անհամաձայնությունը հիմնավորել է՝ նշելով, որ թիվ ԵԱԴԴ/0120/04/17 սնանկության գործն արդեն իսկ ավարտվել է, այլևս չի գտնվում իր վարույթում, իսկ գործով վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

13. Թիվ ԵԴ/28533/02/21 քաղաքացիական գործը Սնանկության դատարանին հանձնելու հնարավորությունը գնահատելու համար անհրաժեշտ է փաստել օրենսդրական նախապայմանների միաժամակյա առկայությունը: Ընդ որում, առաջնահերթորեն ենթակա է ստուգման սնանկության գործի վարույթն ավարտված չլինելու նախապայմանը, քանի որ մյուս նախապայմանների առկայությունը կարող է էական լինել բացառապես այդ նախապայմանն ապահովված լինելու դեպքում:

Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-11-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ Դատարանը թիվ ԵԴ/28533/02/21 քաղաքացիական գործը ՀՀ սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին որոշումը կայացրել է 2022 թվականի մարտի 22-ին, այսինքն՝ թիվ ԵԱԴԴ/0120/04/17 սնանկության գործի վարույթն ավարտվելուց և վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Այսպիսով, թիվ ԵԴ/28533/02/21 քաղաքացիական գործի հետ առնչվող թիվ ԵԱԴԴ/0120/04/17 սնանկության գործի վարույթն ավարտված լինելու պարագայում, անկախ օրենսդրությամբ նախատեսված մյուս նախապայմանների առկայությունից, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի

կիրառումն օբյեկտիվորեն անհնարին է, իսկ Դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառումը՝ առարկայազուրկ:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ թիվ ԵԴ/28533/02/21 քաղաքացիական գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ԵԴ/28533/02/21 քաղաքացիական գործը՝ ըստ հայցի Հմայակ Սիմոնյանի ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության, թիվ ԵԱԴԴ/0120/04/17 սնանկության գործով կառավարիչ Արամայիս Իսպիրյանի, ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Երևան քաղաքի նոտարական տարածքի նոտար Աննա Ղազարյանի՝ աճուրդն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ